

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մելս Հարությունյանի ելույթը Համաշխարհային հայկական կոնգրեսի և ՌԴ հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի հետ վայոցձորյան հանդիպմանը

Ք. Եղեգնաձոր

15.10.2014թ.

Մեծարգո պարոն Աբրահամյան,

Հարգելի հյուրեր, վայոցձորցիներ, սիրելի աշակերտներ:

Այսօր մենք հպարտ և ուրախ ենք, որ Վայոց ձոր, իր ծննդավայր է ժամանել նշանավոր մեր հայրենակից Համաշխարհային հայկական կոնգրեսի և ՌԴ հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

Պարոն Աբրահամյանը ծնվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղում, որտեղ էլ անցել է նրա մանկությունն ու պատանեկությունը: Նա սովորել և ավարտել է Մալիշկայի միջնակարգ դպրոցը: Այնուհետ իր բացառիկ աշխատասիրության և տաղանդի շնորհիվ աչքի է ընկել այն բոլոր բնագավառներում, որտեղ-որ սովորելիս կամ աշխատելիս է եղել:

Այսօր հայազգի յուրաքանչյուր անհատ շատ լավ գիտակցում է Արա Աբրահամյանի ունեցած հսկայական դերը հայ-ռուսական բարեկամության ամրապնդման գործում: Լինելով նվիրյալ հայրենասեր և բարերար՝ նա մեծ ծավալի բարեգործական ծրագրեր է իրականացնում Հայաստանի և Արցախի Հանրապետություններում՝ ի նպաստ մեր ժողովրդի բարեկեցության: Պարոն Աբրահամյանի բազմաթիվ նախաձեռնություններից մեկն էլ <<Երգը՝ բարեկամության կամուրջ>> խորագրով հանրապետական փառատոնն է: Փառատոնն արդեն դարձել է ավանդական: Փառատոնին մեր մարզի դպրոցականները սիրով և մեծ ակտիվությամբ են մասնակցում, որի շնորհիվ բազմիցս մեր մասնակիցները դարձել են փառատոնի դափնեկիրներ:

Հարգելիներս, այսօր դուք ականատես կլինեք հոկտեմբերի 29-ին կայանալիք փառատոնի տարածաշրջանային փուլի հաղթողների գեղեցիկ կատարումներին: Ելույթ կունենան Ջերմուկի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի, Մալիշկայի Միխայիլ Լոմոնոսովի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի, Վայքի հիմնական և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների սաները:

Օգտվելով առիթից Վայոց ձորի մարզի բնակչության անունից պարոն Աբրահամյանին մաղթում եմ ամուր առողջություն և հաջողություններ իր հայրենանվեր հետագա բոլոր ձեռնարկներում: